ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 17.09.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 14-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ N 1	Կապալառու կազմակերպության կողմից կանխավճար ստանալու վերաբերյալ ներկայացված դիմումը և բանկային երաշխիքը:
Փոփոխության նկարագրություն	Կնքվել է համաձայնագիր Պայմանագրի՝ 2018 թվականի համար վճարման ենթակա գումարից կանխավճար տրամադրելու վերաբերյալ:
Փոփոխության հիմնավորում	Պատասխանատու ստորաբաժանման եզրակացություն և Պայմանագրի 8.4 կետ:

Պատվիրատու՝ Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
17.09.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 պայմանագրի

ք. Երևան 14.12.2018թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու)՝ ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Ա. Մկրտչյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և <<Սնար>> ՍՊԸ-ն՝ ի դեմս տնօրեն Ն. Սարգսյանի և <<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ-ն՝ ի դեմս տնօրեն Հ. Մնացականյանի (այսուհետ՝ երկուսը միասին Կապալառու), որոնք գործում են ընկերությունների կանոնադրությունների և միմյանց միջև 21.06.2018թ. կնքված համատեղ գործունեության պայմանագրի հիման վրա, մյուս կողմից՝ երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր) հիմք ընդունելով Երևանի թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների իրականացման համար Կողմերի միջև 17.09.2018թ. կնքված N ՀՀՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 5.1 կետում ավելացնել նոր ենթակետ հետևյալ բովանդակությամբ.

<<5.1.2 Պայմանագրի՝ 2018 թվականի համար վճարման ենթակա գումարից մինչև 125 000 000 (մեկ հարյուր քսանհինգ միլիոն) ՀՀ դրամի չափով՝ կանխավճարի ապահովման բանկային երաշխիք ներկայացնելուց հետո Պատվիրատուն փոխանցում է Կատարողի բանկային հաշվին՝ որպես կանխավճար:

Կանխավճարի մարումն իրականացվում է հանձնման-ընդունման արձանագրությունների հիման վրա կատարվող վճարումներից նվազեցումներ (պահումներ) կատարելու ձևով՝ ներկայացված հանձնման-ընդունման արձանագրության ամբողջ գումարի չափով:>>:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը կազմված է 1 (մեկ) էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ՝
ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011011864
ՀՎՀՀ 02565827

Գլխավոր քարտուղար՝
_____ Ա. Մկրտչյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Սնար>> ՍՊԸ
ք. Երևան, Բրյուսովի փ, 19 շենք, բն. 9
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Կենտրոն Մ/Ճ
Հ/Հ 1150016851931912
ՀՎՀՀ 02646107

Տնօրեն՝
_____ Ն. Սարգսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ՝
<<Թիվ 1 Շինվարչություն>> ԲԲԸ
ք. Գավառ Անդրանիկի 5
<<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1150014871111107
ՀՎՀՀ 08404037

Տնօրեն
_____ Հ. Մնացականյան
(ստորագրություն)
Կ.Տ.

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
“ARMBUSINESSBANK” CJSC

N 85711-02

«14» 12 2018

ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի** (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, ՀՎՀՀ 02565827) և **«ՍՆԱՐ» ՍՊԸ** (իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Բրյուսովի փող. շ 19, բն. 19, ՀՎՀՀ՝ 02646107) (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 17.09.2018թ. թվականին կնքված ՀՀ ք. Երևան թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների N ՀՀ ՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 պետական գնման պայմանագրից բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Սույն երաշխիքով բենեֆիցիար է համարվում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Բենեֆիցիար):

3. Երաշխիքով <<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել **87,200,000 (ութսունյոթ միլիոն երկու հարյուր հազար) ՀՀ դրամ** (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահանջելու Երաշխավորված պարտավորությունների խախտելու հիմնավորումը: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

4. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

5. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

6. Սույն Երաշխիքը ուժի մեջ է Երաշխիքի գումարը Պրինցիպալի՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում առկա թիվ 1150016851931912 հ/հ-ին փոխանցելու պահից և գործում է մինչև **10.06.2019թ. ներառյալ**:

7. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

8. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարին իրավունք է վերապահում վճարման պահանջ ներկայացնելու Երաշխիք տվող անձին սպասարկող ցանկացած բանկ, Երաշխիք տվող անձի ցանկացած հաշվից անվիճելի և անառարկելի կարգով պահանջելու իրեն վճարել Երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն Երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն Երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ Երաշխիքի գումարի 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, Երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում Երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե պահանջը ներկայացվել է Երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է Բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ՝ **Ա. Միքայելյան**

Գլխավոր հաշվապահ՝ **Ն. Սարգսյան**

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ЗАО «АРМБИЗНЕСБАНК»
“ARMBUSINESSBANK” CJSC

N 857211-02

«14» 12 2018

ԿԱՆԽԱՎՃԱՐԻ ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է **Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի** (ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3, ՀՎՀՀ 02565827) և **«ՍՆԱՐ» ՍՊԸ** (իրավաբանական հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, Բրյուսովի փող. շ 19, բն. 19, ՀՎՀՀ՝ 02646107) (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև 17.09.2018թ. թվականին կնքված ՀՀ ք. Երևան թիվ 22 հիմնական դպրոցի հիմնանորոգման աշխատանքների N ՀՀ ՔՊԿ-ԲՄԱՇՁԲ-18/2 պետական գնման պայմանագրից բխող՝ Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) պատշաճ կատարման ապահովում:

2. Սույն երաշխիքով բենեֆիցիար է համարվում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը (այսուհետ՝ Բենեֆիցիար):

3. Երաշխիքով <<ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ>> ՓԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել **37,800,000 (երեսունյոթ միլիոն ութ հարյուր հազար) ՀՀ դրամ** (այսուհետ՝ Երաշխիքի գումար)՝ Պահանջը ստանալուց հետո 3 (երեք) աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահանջելու Երաշխավորված պարտավորությունների խախտելու հիմնավորումը: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

4. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

5. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

6. Սույն Երաշխիքը ուժի մեջ է Երաշխիքի գումարը Պրինցիպալի՝ «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ում առկա թիվ 1150016851931912 հ/հ-ին փոխանցելու պահից և գործում է մինչև **10.06.2019թ. ներառյալ:**

7. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով:

8. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, ապա Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարին իրավունք է վերապահում վճարման պահանջ ներկայացնելու Երաշխիք տվող անձին սպասարկող ցանկացած բանկ, Երաշխիք տվող անձի ցանկացած հաշվից անվիճելի և անառարկելի կարգով պահանջելու իրեն վճարել Երաշխիքի գումարը՝ ներկայացնելով սույն Երաշխիքի իր օրինակը:

9. Այն դեպքում, երբ Բենեֆիցիարը ներկայացրել է սույն Երաշխիքի պայմաններին համապատասխանող պահանջ, իսկ Երաշխիք տվող անձը Երաշխիքով սահմանված ժամկետում չի վճարում Պահանջում նշված գումարն ամբողջությամբ, այդ թվում՝ երբ Բենեֆիցիարի կողմից սույն Երաշխիքի 8-րդ կետում ամրագրված իր իրավունքից օգտվելու դեպքում՝ Երաշխիք տվող անձի բանկային հաշվում առկա չեն բավարար միջոցներ, ապա Երաշխիք տվող անձը, իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Բենեֆիցիարին վճարում է տուժանք՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար՝ Երաշխիքի գումարի 0.05 տոկոսի չափով: Ընդ որում, Երաշխիքի գումարի վճարման իր պարտավորությունը չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Երաշխիք տվող անձի պատասխանատվությունը չի սահմանափակվում Երաշխիքի գումարով:

10. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի պահանջը, եթե պահանջը ներկայացվել է Երաշխիքի գործողության ժամկետի ավարտից հետո:

11. Երաշխիք տվող անձը պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը, մերժման մասին գրավոր տեղեկացնում է Բենեֆիցիարին:

12. Սույն երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

13. Սույն երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Վարչության նախագահ Ա. Միքայելյան

Գլխավոր հաշվապահ Ն. Սարգսյան

Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, 0010, Նալբանդյան 48; Հեռախոս՝ (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Էլ. փոստ՝ info@armbusinessbank.am; Կայք՝ www.armbusinessbank.am
Адрес: Налбандян 48, 0010, Ереван, РА; Телефон: (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; Эл. почта: info@armbusinessbank.am; Веб-сайт: www.armbusinessbank.am
Address: 48 Nalbandyan, 0010, Yerevan, Armenia; Telephone (+37410) 59 20 20, (+37460) 37 25 00; E-mail: info@armbusinessbank.am; Web-site: www.armbusinessbank.am